ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2014թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի ենթակայության «Ն. Բ. Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս (17 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 6000 դրամ անվանական արժեքով) համայնքային սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Ն. Բ. Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ կնքելով բաժնետոմսերի նվիրատվության մասին պայմանագիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2003թ հոկտեմբերի 30-ի «Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների օպտիմալացման շրջանակներում մի շարք բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առրտրային կազմակերպություններ վերակազմակերպելու մասին» N1413-Ն որոշմամբ «Ն.Բ.Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ առողջապահության նախարարության ենթակայությունից անցել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը և վերակազմակերպման արդյունքում միաձուլվել է «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը և մինչև 2012թ հունիս ամիսը գործել է հիշյալ կազմակերպության կազմում:

Երևան քաղաքի ավագանու 2011թ հունիսի 24-ի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» N260-Ա որոշմամբ «Ն. Բ. Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը առանձնացել է «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից:

Ընկերության ստեղծման օրվանից գործունեության հիմնական ուղղություններից է հանդիսացել աշխատավոր բնակչության աշխատանքի պայմանների և մասնագիտական հիվանդությունների ուսումնասիրությունը: Համաձայն կանոնադրության Ընկերությունը փորձարարական, կլինիկական և հիգիենիկ ոլորտներում պետք է կատարի գիտական հետազոտություններ,իրականացնի բնակչության որակյալ բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև մասնագիտական հիվանդությունների ախտորոշում և տրամադրի վերջնական փորձագիտական եզրակացություն: Ընկերությունը 2013թ համար պայմանագիր ունի կնքած միայն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտական պետական կոմիտեի հետ, համաձայն որի պետք է կատարի շրջական միջավայրի

աղտոտվածության վրա պղնձի արդյունահանող և արտադրող ձեռնարկությունների ազդեցության ուսումնասիրություն, գնահատի արտադրության արտանետվածքների բժշկա-կենսաբանական հետևանքները, ինչպես բանվորների, այնպես և բնակչության առողջության վրա ու հիմնավորի դրանց կանխարգելման ուղիները:

Ընկերությունը չունի գործունեության իրականացման լիցենզիա, գույքի սեփականության իրավունքը հավաստող համապատասխան փաստաթղթեր:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն, որ Ընկերությունը իրականացնում է հանրապետական նշանակության գիտական, գիտա-տեխնիկական, փորձագիտական գործունեություն, ուստի Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն առավել արդյունավետ իրացնելու, հետագա զարգացումն ապահովելու, համար նպատակահարմար կլինի դրանք հանձնել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ առողջապահության նախարարության:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից առկա է նախնական համաձայնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանը գույք նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանը գույք նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ